կամ իրադարձության նախընթաց վկայագրություն, հակառակ պարագային՝ դա կլիներ անորոշ ժամանակ: «Եւ յետ առնելոյ Օսմանցոցն զԿոստանդնուպոլիս» (էջ 57), «Ի ժամանակին՝ յորում շահն զմեծ սուրգունն արարեալ» (էջ 183), «Եւ յաւուր միում յորժամ հանդէս արարեալ էր շահն...» (էջ 192), «Եւ ի ժամանակին՝ յորում եկն Սարդարն Օսմանցւոց՝ որում անունն էր Օքուզահմատ փաշայ ի վերայ Երևանայ բերդին...» (էջ 193), «Յետ փախստեան Սահակ կաթուղիկոսին յաշխարհ տէրութեան Օսմանցւոց» (էջ 207) և այլն:

Ժամանակային մյուս միավորը շատ տարածված է միջնադարյան տեքստերում և հաշվվում է ըստ ***թագավորի գահակալության կամ մահվան, ինչպես նաև՝ կաթողիկոսի գահակալության կամ մահվան*** փաստի. «Մինչ կայր Թամրազ թագաւորն ի յերկրի իւրում...» (էջ 144) և այլն: Հաշվման այս կերպը շատ հաճախ առաձգական է ու հարաբերական, քանզի կոնկրետ ամրագրումներ չի արձանագրում:

Քիչ չեն դեպքերը, երբ Դավրիժեցին հիշատակում և՛ թվականը, և՛ այն իրադարձությունը, որով նշանավորվել է այդ թվականը. «Յորժամ էր թուական Հայոց ՌԽԹ, մեծ Սիմոն խանն, թագաւորն Վրաց, ապստամբեցաւ յՕսմանցւոց տէրութենէն...» (էջ 72), «Եւ նոր էր փոխեալ թուականն Հայոց և մտեալ ի ՌԾԴ յառաջնում ամսեանն Հայոց նաւասարդի, որ քշեցին զերկիրն» (էջ 79) և այլն:

Երբեմն Դավրիժեցին մեկ նախադասության մեջ ժամանակը ներկայացնում է իբրև վերը ***նշվածներով համադրված ժամանակ՝*** «Ի ժամանակս առաջնորդութեան Մելքիսէթ կաթուղիկոսին, յետ մեծ սուրգունին... (էջ 167): Այս կերպ հաստատագրվում է նաև տվյալ ժամանակաշրջանի կարևորությունը:

Դավրիժեցին հաճախ է վկայագրվող իրադարձությունների ժամանակը թվագրում իրեն ժամանակակից լինելու գործոնով՝ «յաւուրս մեր կատարեցաւ այս խորհուրդ և մտածութիւն» (էջ 62), «Եւ այս բանս Շահաբասին՝ զոր ասացեալ է ընդ մեծամեծս իւր՝ այժմու ժամանակիս լցեալ կատարեցաւ յաւուրս մեր» (էջ 95), «և